



**ՀՈՐԵԼՅԱՆՍԿԵՆ ՀՆՆԳԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ
ՀՅՑ ՄԵԺ ԼՈՒՍՆՎՈՐԻԶ ԽՆԶՍՏՈՒՐ ԵՐՈՎՅԱՆԻ
ԺՆՆԳՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ**

այ ժողովրդի համար միշտ էլ թանկ ու նվիրական է եղել իր հայրենասեր զավակի, հայ նոր գրականության հիմնադիր ու լուսավորիչ հաշատուր Արովյանի անմեռ հիշատակն ու սիրելի անունը: Նրա անունը որքան հնանում, այնքան պայծառանում է և նոր իմաստ ու նշանակություն ստանում:

Հայ ժողովուրդն իր հոգու բովանդակ ջերմությամբ սիրել է Արովյանի հայրենասեր, բոցավառ հոգին, նրանում տեսնելով իր հույզերի, տենչերի, տառապանքների և ապագա հույսերի ու երազների լավագույն արտահայտչին, սիրելի երգչին: Արովյանը ճշմարտորեն ապրեց իր ժողովրդի մեծ ողբերգությունը, հայ ժողովրդի վերջը մեծացավ, դարձավ անդուգական հայրենասերի արտի մեծ «վերք»:

Ու այրվեց նա անկեղ մորենու նման, իր ժողովրդի վշտով հրկիզեց իր սիրտը, իր ապրած խավար դարում լուսավորելով դեպի գալիքը տանող իր ժողովրդի ճամբան: Այգայիսին էր Արովյանը:



1955 թվականի նոյեմբերի 8-ին լրացավ մեծ հայրենասերի ծննդյան 150 տարին: Վերածնված հայ ժողովուրդը խորը երախտագիտությամբ նշեց իր հարգատա զավակի հիշարժան տարեթիվը: Մայր Հայրենիքի գրական հասարակայնությունը, մտավորականությունը և աշխատավորությունը մեծ հանդիսությամբ ու սրտագին զգացմունքներով մեծարեցին Արովյանի ծննդյան 150-ամյակը: Այդ օրերին կարգացվեցին բազմազան թնամաներով դասախոսություններ ու դեկուցումներ՝ «Արովյանի կյանքն ու գրական գործունեությունը», «Արովյանը և Ռուսաստանը», «Հայ նոր գրականության հիմ-

նադիր հաշատուր Արովյանը», «Արովյանի մանկավարժական հայացքները», «Մեծ հումանիստն ու հայրենասերը», «Արովյանի գրական ժառանգությունը» և այլն:

Գրադարաններում և քննարկարաններում այդ օրերին կազմակերպվեցին նաև ցուցահանդեսներ՝ նվիրված մեծ լուսավորչի կյանքին ու գործունեությանը:

Երկրի տարբեր շրջաններից, Հայաստանի բազաքներից և գյուղերից բազմաթիվ ուղևորություններ կատարվեցին դեպի Քանաքեռ՝ հաշատուր Արովյանի տուն-թանգարանը, ուր ծնվել, մեծացել, երազել ու գրել էր նա՝ ծանոթանալու նրա կյանքն ու գործունեությունը պատկերող լուսանկարներին, ցուցանյութերին, փաստաթղթերին:



հաշատուր Արովյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Մոսկվայում, Միությունների տան դահլիճում: ՍՍՌՄ Գրողների միության վարչության քարտուղար Վ. Սմիռնովը իր ներածական խոսքում բարձր գնահատեց դեմոկրատ գրողի գրական ու լուսավորական գործունեությունը: Մոսկվայի կոմոնսոսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր Խ. Մոմջանը հանդես եկավ «հաշատուր Արովյանի կյանքը և ստեղծագործությունը» զեկուցումով:

Զեկուցումից հետո բանաստեղծներ Գ. Բորյանը, Ե. Նիկոլաևսկայան, Հ. Շիրազը, Գ. Էմինը կարդացին Արովյանին նվիրված իրենց բանաստեղծությունները: Երեկույթի զեկարվեստական մասում հանդես եկան Մոսկվայի և Հայաստանի արտիստները:

Հայ մեծ լուսավորչի ծննդյան 150-ամյակին նվիրված հորեյլանական երեկոսնր տեղի ունեցան նաև միութենական մյուս մայրաքաղաքներում:



Առանձնահատուկ շուքով և խանդավառ, բացառիկ հանդիսավորությամբ տոնվեց Աբովյանի հորեկյանը նաև Երևանում: Հոկտեմբերի 8-ին, երեկոյան, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան կենտրոնի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնը լեփ-լեցուն էր: Շքեղ դահլիճում հավաքվել էին մայրաքաղաքի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, արտադրության առաջավորներ, գրականության, գիտության և կուլտուրայի գործիչներ, Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցող հոգևոր և աշխարհիկ պատգամավորներ, արտասահմանյան հյուրեր և ուրիշ շատեր:

Տոնականորեն զարդարված բեմի խորքում, թարմ ծաղիկների մեջ դրված է մեծ լուսավորիչ հաշատուր Աբովյանի մեծագիրը՝ դեղեցիկ դիմանկարը՝ կենդանի, խոհուն և հանձարի կնիքը ճակատին:

Բեմի երկու կողմերում, սպիտակ պատուհի վրա, հայերեն և ռուսերեն գրված են մեծ հայրենասերի կրակոտ խոսքերը՝ «Ապրել և մեռնել Հայրենիքիս համար—անա այն խեղիքը, որ ես քնտրել եմ պատանեկական տարիներից ի վեր»:

Նախագահության սեղանի շուրջը. տեղեր են գրավում պետական, հասարակական, դրական անվանի մարդիկ՝ Ս. Թովմասյանը, Ա. Քոչինյանը, Հ. Հովհաննիսյանը, Բ. Մարտիրոսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը, գրողներ Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, ինչպես և կառավարական հորեկյանական հանձնաժողովի պատվավոր անդամները:

Հորեկյանական հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ, կառավարական հորեկյանական հանձնաժողովի նախագահ Ա. Քոչինյանը:

«Աբովյանի դրական ժառանգությունը, — ասաց ղեկուցողը նիստը բաց անելով, — անգնահատելի գանձ է հայ ժողովրդի համար: Բայց Աբովյանն իր հանձարի իսկական մեծությունը ճանաչվեց և ղեահատվեց միայն սովետական կարգերում: Նրա գրական մեծ ժառանգությունը դարձավ ժողովրդական լայն մասսաների սեփականություն»:

Բացման խոսքից հետո հանդիսավորապես հնչում է Սովետական Միության Պետական Հիմնը:

Այնուհետև երաժշտուր Աբովյանի կյանքի և գրական-հասարակական գործունեության մասին ընդարձակ և բազմակողմանի ղեկուցումով հանդես եկավ գրող Հրաչյա Քոչարը:

Ահա անցյալից, ժամանակի մշուշից բարձրանում է Աբովյանի լուսապայծառ դեմքը, իր ամբողջ գրավորությամբ, հերոսությամբ և սրտաճմլիկ ողբերգությամբ: Ահա պատանի Աբովյանը Քանաքեռում: Հայ գեղջուկի այդ պարզ որդին ականատես է դառնում հայ ժողովրդի անլուր տառապանքներին, անհուն զրկանքներին, ավարառություններին, և նրա սրտում կոտտում է հայ ժողովրդի «Վերքը»:

Ուսման տենչը սրտում, իր ժողովրդին օգտակար լինելու, լուսավորելու, խավարի, տգիտության և բռնության ու անարդարության դեմ աննահանջ պայքարելու համար, հառնում է ունկնդրի դեմ լուսաճակատ մեծ քանաքեռցին:

Աբովյանը իր արժեքով դուրս էր գալիս իր ժամանակի նեղ շրջանակից: Ժամանակակիցներից շատերը չհասկացան նրան, բայց ժողովուրդը խորապես ըմբռնեց ու հասկացավ նրան և Աբովյանը թարգմանը հանդիսացավ հայ ժողովրդի զգացմունքների, հայրենազրկության:

«Վա՛յ էն ազգին, որ աշխարհումս
անտեր ա,
Վա՛յ էն երկրին, որ քշեամու գերի ա...»:

Աբովյանը մարգարեի կանխատեսությամբ գուշակեց ու ցույց տվեց հայ ժողովրդի փրկության ճշմարիտ ճամբան: Այդ խավար ու դաժան դարում նա ըմբռնեց հայ ժողովրդի ապրելու և տևելու վսեմ խորհուրդը: Նա իր պայծառ հայացքը դարձրեց դեպի ժողովրդի վերածնման, ապրելու, ստեղծագործելու, գոյատևելու ուղին. «Հայ ժողովուրդը իր բախտը պիտի կապի ուսու ժողովրդի կյանքին»:

Աբովյանի «Վերք Հայաստանի» դարձավ հայ ժողովրդի փրկության դժվարին ճանապարհին պարզած ազատության վեհ դրոշմ, հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչության և ինքնարժեքավորման արտահայտությունը:

Աբովյանի գիրքը դարձավ հայ և ռուս ժողովուրդների բարեկամական մեծ սիրո անխզելի զոռն ու թանկագին շողկապը: Աբովյանը ավանդեց իր հետնորդներին հավիտյան պահել փոխադարձ այդ սրբազան սերը:

«Այս կապն անխզուն, այս սերը
սրբազան,
Թող մեա մեր մեջ ի կյանս
հավիտյան...»:

Ժողովուրդների մեծ քարոզիչն ու երգիչը քարոզում էր անկաշառ, անշահախնդիր հայրենասիրություն:

«Շունչդ տուր, հոգիդ տուր, բայց քո
Հայրենիք
Մի՛ տուր քննամյաց...»:

Մեծ է նաև Արժույթի դերը լեզվաշինարարության ասպարեզում: Նա կողմնակից էր լեզվի և գրականության ժողովրդականացման սկզբունքին, որով և սկիզբը դրեց հայ նոր գրականության և մեր աշխարհարար լեզվի:

«Վերք Հայաստանի» վեպի կրակոտ, փոթորկոտ էջերում կանգնում է մեր դեմ ինքը՝ Արժույթանը: Արժույթանին ճանաչելու համար կարիք չկա ձեռքի տակ ունենալ նրա կենսագրությունը. «Վերք»ի էջերից դուրս են հորդում մեծ քանաքեռոցու կերպարի պայծառ լույսերը...: «Վերք»ը Արժույթանի կրակոտ հոգու խոռվքն է, ազնիվ հայրենասերի սրտի աղաղակը:

Արժույթանը այրվող հոգիներից էր: Իր ժողովրդին, իր ազգին «պետք գալու» համար նա այրվեց ամբողջովին, ավեց նրան իր շունչը, իր հոգին, իր զգացումը: Արժույթանը ինքը հայ ժողովուրդն է:

«Արժույթանը մի անձնավորություն չէ, այլ իր ժողովրդի պատմության մի ամբողջ դարաշրջան, մի անուն չէ, այլ մի ամբողջ ժողովուրդ, մի գործիչ չէ, այլ կյանքի մի նոր հոսանք իր ժամանակի համար...»:

Լսվում են զեկուցողի վերջին խոսքերը: Անդրադառնում ես լսածիդ և մի պահ հիշողությանդ մեջ հստականում են մեր օրերի մեծ կրասիկի՝ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի խոսքերը.

«Արժույթանը խտացումն էր հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքի, նրա հոգու և իմաստու-

թյան, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրբազան լեզուն:

Խաչատուր Աբովյանը ամեն ինչ է մեզ համար: Նա ուսուցիչ է և դաստիարակ, նա հայրենասիրության մեր ներշնչարանն է, նա հայության ապագայի խանդավառ պատգամախոսն է: Նա սովորեցնում է մեզ սիրել և պաշտել Հայրենիքը, հայ կուլտուրան և մայրենի լեզունը:

Ջեկուցումը վերջանում է:

Հորեկանական երեկոն կզրափակվում է մեծ համերգով, որին մասնակցում են մայրաքաղաքի արտիստական լավագույն ուժերը:



Դուրս ենք գալիս դահլիճից՝ Աբովյանի ոգով լցված: Դրսում՝ լույսերի մեջ ողողված Երևանն է, գիշերային լուսավառ, ուրախ Երևանը: Փողոցներում հորդում է կենսուրախ բազմությունը:

Ու մի ակնթարթ մտքիդ մեջ մեխվում է Աբովյանի ապրած դարը: Երևան, ավարառություն, կոտորած, լլկանք, հալածանք, դավեր, մղձավանջ... Մի թախիծ է իջնում հոգուդ... Եթե ապրեք և տեսներ մեծ քանաքեռոցին իր երազած Երևանը... Բայց նա մեզ հետ է, քայլում է մեզ հետ ու գնում դեպի հավերժություն, ինչպես ինքը հայ ժողովուրդը:

Անցնում ենք Աբովյանի լուսահորդ պողոտայով: Աշնանային թարմություն է շնչում ամեն կողմ: Ո՛վ կարող է պատկերացնել Երևանը առանց Աբովյան փողոցի:

Աբովյանը հայ ժողովրդի սրտումն է, սերունդների սրտում, գալիքի և հավերժի գրկում:

